**Արձանագրություն N 3**

ՀՀ-ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-(18/3-Լ) ծածկագրով էլեկտրոնային աճուրդով Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար համակարգչային տեխնիկայի ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 26 փետրվարի 2019թ.
ժամը 11:00

Մասնակցում էին՝
Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Մարիանա Դուրգարյանը
Անդամներ՝ Գալուստ Գալստյանը և Գրիշա Ստեփանյանը
Քարտուղար՝ Լուսինե Հարությունյանը

## I. ՀՀ-ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-(18/3-Լ) ծածկագրով գնման ընթացակարգի վերաբերյալ

Ընդունել ի գիտություն ՀՀ ֆինանսների նախարարության սույն թվականի փետրվարի 22-ի թիվ 01.1/26-1/2727-19 շրջաբերականը, որում, մասնավորապես, նշվում է, որ 11/02/2019թ. ժամը 09:00-ից մինչև 19/02/2019թ. ժամը 18:00-ն ընկած ժամանակահատվածում էլեկտրոնային աճուրդի ծրագրային ապահովման մեջ ի հայտ են եկել խնդիրներ, որոնց հետևանքով մի շարք կազմակերպություններ չեն կարողացել մասնակցության հայտ ներկայացնել գնման ընթացակարգներին, մասնակցել հակադարձ աճուրդներին, ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթեր և այլն:

Հաշվի առնելով վերոգրյալը, ինչպես նաև գնման ընթացակարգների բնականոն ընթացքն ապահովելու անհրաժեշտությունը չկայացած հայտարարել 19/02/2019թ. դրությամբ էլեկտրոնային աճուրդների համակարգի միջոցով կազմակերպված և չավարտված գնման ընթացակարգերը, որոնց հայտերի ներկայացման վերջնաժամկետ է սահմանված եղել վերոնշյալ ժամանակահատվածը և որոնց շրջանակներում պետք է կայանային հակադարձ աճուրդները:

## II. Գնահատող հանձնաժողովի որոշման մասին

Գնահատող հանձնաժողովը որոշեց՝

1. Հիմք ընդունելով վերը նշված շրջաբերականը՝ չկայացած հայտարարել ՀՀ-ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-(18/3-Լ) ծածկագրով ընթացակարգը:

Ընդունվել է որոշում.
**կողմ՝ 3, դեմ՝ 0**
Գնահատող հանձնաժողովի

նախագահ՝ _____ Մ. Դուրգարյան

անդամներ՝ _____ Գ. Գալստյան

_____ Գ. Ստեփանյան

քարտուղար՝ _____ Լ. Հարությունյան